ԽՂՃՄՏԱՆՔ։

Խղճմտանքը մի ուրիշ ապացոյց է մեր հոգու անմահութեան։ Ուրաքանչիւր մարդ իւր սրտի մէջ մի դատարան ունի, որտեղ ինքն իրան դատում է, սպասելով որ գերագոյն Դատաւորը վերջնական վճիռը տայ։ Եթէ ախտը միայն մեր մարմնի մի ֆիզիքական հետեւանքն է, ուրեմն որտեղից է այն տարտամը, որ յանցաւոր, բայց բաղդաւոր մարդի հոգին խռովում է։ Ինչի՞ համար խղճի խայթը այնքան դարհուրելի է թւում, որ աւելի լաւ են համարում աղքատութեան ներքոյ ընկճիլ — քան թէ անազնիւ ճանապարհներով հարստութիւն դիզել։ Վագրը կոտր կոտր է անում իւր որսը եւ հանգիստ քնում է, իսկ մարդը մարդասպանութենից յետ անքուն է միշտ։ Նա որոնում է անապատ տեղեր, բայց առանձնութիւնը նորան զարհուրեցնում է. Նա գերեզմանների շուրջն է պտոյտ գալիս, բայց գերեզմաններից սաստիկ երկնչում է։ Նորա հայեացքը անհանգիստ եւ շարժուն է. Նա չէ համարձակում անվեհեր կերպով ուղղակի նայել երկնքին։ Նորա բոլոր զգայարանքը կարծես սրվել են նորան տանջելու համար։ Գիշերային մթութեան մէջ նա սպառնացող լոյսեր է տեսնում. Նա միշտ դիակների հոտ է զգում. այն կերակուրները, որ ինքն իւր ձեռով է պատրաստել կարծում է թէ թոյնի համ ունին. Նորա ականջը լսում է աղաղակներ այնտեղ, որտեղ թագաւորում է լռութիւն. Իւր բարեկամին գրկելիս, նա կարծում է թէ նորա զգեստի տակ դաշոյն է ծածկված։

Հ. Ափօճրեան։

ՅՈՅՍ։

Կայ երկնքի մէջ մի աստուածային զօրութիւն, որ կրօնի եւ առաքինութեան անբաժան ընկերն է։ Նա օգնում է մեզ տանել կեանքը, ընկերանում է մեզ փոթորկի ժամանակ եւ ցոյց է տալիս նաւահանգիստը. Նա հաւասար կերպով օգնում է թէ երեւելի եւ թէ անծանօթ ուղեւորներին։ Թէեւ նորա աչքերը

կապոցով կապված են, բայց նորա հայեցուածքը թափանցում է ապագային. երբեմն նա բողբոջուն ծաղիկներ է բռնում իւր ձեռքի մէջ, երբեմն մի բաժակ կախարդական ըմպելիքով լի։ Ոչ մի բան նման չէ նորա ձայնի քաղցրութեան, նորա ժպիտի գեղեցկութեան. որքան մարդ մօտենում է գերեզմանին, այնքան նա մաքուր եւ փայլուն է երեւում մխիթարուած մահկանացուների աչքում. հաւատք եւ ողորմածութիւնը նորան «քոյր» են կոչում։ Նորա անունը «Յոյս» է։

[illegible]

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏՍՈՒԹԻՒՆ

Հայն դարերէ ի վեր իւր աղէտքն ու թշուառութիւնը կ՚ողբայ եւ տակաւին ալ ողբալու վրայ է։

Հայուն կրած այն յարատեւ աղէտից ու թշուառութեան շարունակութիւնը սա ընդհանուր կարծիքն ու համոզումը յառաջ բերած է, ըսել թէ՝

Թշուառութիւնը Հայուն ճակատագիրն եղած է։

Պիտի հաւատա՞ն մեզ արդեօք, երբ ըսենք թէ բոլոր մեր այս աղէտից եւ թշուառութեան պատճառը բուն իսկ մենք ենք։

Այդ թշուառութիւնն հարկաւ իր արտաքին եւ անուղղակի պատճառներն ունի, որոց դէմ շարունակ կռուեցանք ու կորոնջանք, բայց ինչո՞ւ չենք տեսներ ու չենք զգար թէ դորա ամենէն գլխաւոր եւ ուղղակի պատճառը մենք ենք։

Ի՞նչ ըրած ենք, պիտի հարցնեն թերեւս, որ մենք եղած լինինք մեր թշուառութեան բուն պատճառը։

Ոչ թէ բան մ՚ըրած ենք, այլ պէտք եղածը չընելնուս կամ ընել չուզելնուս համար է որ մենք եղած ենք մեր թշուառութեան եւ այս նկուն վիճակին պատճառը։

Ըստ մեզ Հայուն ճակատագրին դէմ հայհոյութիւն է ըսել թէ թշուառութիւնը Հայուն ճակատագիրն եղած է։

Հայուն բուն ճակատագիրը ոչ թէ թշուառութիւն, այլ մեծութիւն է եւ երջանկութիւն, բայց եթէ դարերէ ի վեր եւ